ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/15

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բուլդոզերների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից 25.04.2019թ. ներկայացված (26.04.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/15 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Վանգաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Վանգաս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 25.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից բուլդոզերների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ

ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Վանգաս» ՍՊԸ-ն և համեղ գործունեության կարգով՝ «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «ԱՎԱՆԳԱՐՏ» ԱՄ ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.03.2019թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «ԱՎԱՆԳԱՐՏ» ԱՄ ՍՊԸ-ն (կոնսորցիում) ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. նիստի թիվ 4 արձանագության 1.2. կետի համաձայն՝ հանձնաժողովը «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «ԱՎԱՆԳԱՐՏ» ԱՄ ՍՊԸ-ն (կոնսորցիում) ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատվել են Մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան, կոնսորցիումի անդամները հայտարարվել են հաղթող մասնակից և որոշվել է վերջիններիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

18.04.2019թ. www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն և սահմանվել անգործության ժամկետ՝ մինչև 28.04.2019թ. ներառյալ:

«Վանգաս» ՍՊԸ-ն, ուսումնասիրելով «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «ԱՎԱՆԳԱՐՏ» ԱՄ ՍՊԸ-ն (կոնսորցիում) ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, ներկայացված փա ստաթղթերում հայտնաբերել է Մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող մի շարք թերություններ և 16.04.2019թ. գրավոր դիմել է գնահատող հանձնաժողովին հետևյալ բովանդակությամբ գրությամբ (ուղարկվել է հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին):

«Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչված «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեությամբ «ԱՎԱՆԳԱՐԴ» ԱՄ ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված՝ ընթացակարգի հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» չափանիշին համապատասխանությունն հավաստող փաստաթղթերը և ցանկանում ենք հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել դրանցում առկա ներքոհիշյալ անհամապատասխանությունների վրա:

- «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» բաժնետիրական ընկերության միջև 18.06.2018թ. կնքված N Р18-11700-ДКП ծածկագրով առուվաճառքի պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարումը /հանձնումը/ պետք է իրականացվեր կանխավճարը ստանալուց հետո 20 բանկային օրվա ընթացքում, իսկ 2.4.1 կետի համաձայն՝ կանխավճարի փոխանցումը պետք է կատարվեր պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 21 բանկային օրվա ընթացքում: Ստացվում է, որ նույնիսկ առավելագույն ժամկետների հաշվարկման դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը, ըստ պայմանագրի, չպետք է ուշ լիներ 2018թ. օգոստոսի 15-ից, այնինչ ապրանքի հանձնում-ընդունումն իրականացվել է նույն թվականի հոկտեմբերի 31-ին, այսինքն՝ ուշացումով: Ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար մասնակիցը պետք է ներկայացնի տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը, իսկ ներկայացված փաստաթղթերը հավաստում են, որ պայմանագիրը սահմանված ժամկետում չի կատարվել, հետևաբար գնահատող հանձնաժողովի կողմից նշված պայմանագիրը չի կարող գնահատվել որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորումն հավաստող փաստաթուղթ,

- ներկայացված պայմանագրերում առկա տեղեկությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քննարկման է ենթակա դրանց՝ իրականությանը համապատասխանելու հարցը, մասնավորապես, «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» բաժնետիրական ընկերության միջև 12.12.2018թ. կնքված Р18-21638-ДКП և Р-18-21639-ДКП ծածկագրերով առուվաճառքի պայմանագրերում որպես ապրանքի արտադրության, առաքման և հանձնման-ընդունման ակտի ստորագրման հասցե նշված է ք. Չելյաբինսկ, Կալինով դվոր, տուն 7, այնինչ տվյալ հասցեում տեղակայված է մետաղաջարդոնի ընդունման կետ / https: // 2gis. Ru /chelyabinsk/ geo/2111698001364754/ Inside/2111698001364754?queryState=center%2F61.332046%2C55.071308%2Fzoom%2F17/: Պայմանագրերում հղում է կատարված 01.11.2011թ. № C-RU.AB28.B.03578. համապատասխանության սերտիֆիկատին, որը սակայն տվյալ պահին արդեն իսկ չի

գործել, դրա գործողության ժամկետը լրացել է 21.09.2016թ-ին http://www.list-org.com/sert/%D0%A1-RU.%D0%90%D0%9228.%D0%92.03578:

№P18-11700-ДКП ծածկագրովպայմանագրում հղում է կատարված հետևյալ համապատասխանության սերտիֆիկատին՝ TCRUC-RU.ИМ43.В.01646 / http://www.list-org.com/sert/%D0%A2%D0%A1%20RU%20%D0%A1-RU.%D0%98%D0%9C43.%D0%92.01646/, որը տրված է «Տեխիմպորտ» ՍՊԸ-ի կողմից և որը նույնպես չի գործում /https://pub.fsa.gov.ru/ral/view/15427/accredited-entity/, բացի այդ, «Տեխիմպորտ» ՍՊԸ-ն իրավունք ուներ տրամադրելու սերտիֆիկատներ միայն հետևյալ տեսակի արտադրանքների համար՝

- մարդատար ավտոմեքենաներ / կատեգորիա M1/
- բեռնատար ավտոմեքենաներ առավելագույնը 3,5 տոննա քաշով / կատեգորիա 1/
- մոտոտրանսպորտային միջոցներ / կատեգորիա L/
- ավտոբուսներ, տրոլեյբուսներ / կատեգորիա M2, M3/
- բեռնատար ավտոմեքենաներ 3,5 -12 տոննա քաշով / կատեգորիա 2, 3/
- կցանքներ և կիսակցանքներ /կատեգորիա O/

http://www.techimport.su/%D1%81%D0%B1%D0%BA%D1%82%D1%81.

Ակներև է, որ նշված ցանկում բացակայում են արդյունաբերական տրակտորները և բուլդոզերները:

Ընկերությունը խնդրել է փաստաթղթերի գնահատումն իրականացնելիս՝ հաշվի առնել վերը նշված փաստերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Մրցույթի հրավերի 2.4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Հրավերի 2.5-րդ կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում

մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում շինարարական և/կամ շինարարության մեջ օգտագործվող տեխնիկայի և/կամ պահեստամասերի և/կամ ավտոմեքենաների մատակարարման պայմանագրերը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

«Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչված «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեությամբ «ԱՎԱՆԳԱՐԴ» ԱՄ ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված՝ ընթացակարգի հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» չափանիշին համապատասխանությունն հավաստող փաստաթղթերը և Ընկերությունը ցանկանում է բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել դրանցում առկա ներքոհիշյալ անհամապատասխանությունների վրա:

«Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» բաժնետիրական ընկերության միջև 18.06.2018թ կնքված N Р18-11700-ДКП ծածկագրով առուվաճառքի պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարումը /հանձնումը/ պետք է իրականացվեր կանխավճարը ստանալուց հետո 20 բանկային օրվա ընթացքում, իսկ 2.4.1 կետի համաձայն՝ կանխավճարի փոխանցումը պետք է կատարվեր պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 21 բանկային օրվա ընթացքում: Ստացվում է, որ նույնիսկ առավելագույն ժամկետների հաշվարկման դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը ըստ պայմանագրի չպետք է ուշ լիներ 2018թ. օգոստոսի 15-ից, այնինչ ապրանքի հանձնում-ընդունումն իրականացվել է նույն թվականի հոկտեմբերի 31-ին, այսինքն՝ ուշացումով: Ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար մասնակիցը պետք է ներկայացնի տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը, իսկ ներկայացված փաստաթղթերը հավաստում են, որ պայմանագիրը սահմանված ժամկետում չի կատարվել, հետևաբար գնահատող հանձնաժողովի կողմից նշված պայմանագիրը չի կարող գնահատվել որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորումն հավաստող փաստաթուղթ:

Ներկայացված պայմանագրերում առկա տեղեկությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ քննարկման է ենթակա դրանց՝ իրականությանը համապատասխանելու հարցը, մասնավորապես, «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» բաժնետիրական ընկերության միջև 12.12.2018թ. կնքված Р18-21638-ДКП և Р-18-21639-ДКП ծածկագրերով առուվաճառքի պայմանագրերում որպես ապրանքի արտադրության, առաքման և հանձնման-ընդունման ակտի ստորագրման հասցե նշված է ք. Չելյաբինսկ, Կալինով դվոր, տուն 7, այնինչ տվյալ հասցեում տեղակայված է մետաղաջարդոնի ընդունման կետ/ https:// 2gis.ru/chelyabinsk/geo/ 2111698001364754/ inside/2111698001364754?queryState=center%2F61.332046%2C55.071308%2Fzoom%2F17/: Պայմանագրերում հղում է կատարված 01.11.2011թ. № C-RU.AB28.B.03578. համապատասխանության սերտիֆիկատին, որը սակայն տվյալ պահին արդեն իսկ չի

գործել.դրա գործողության ժամկետը լրացել է 21.09.2016թ-ին http://www.list-org.com/sert/%D0%A1-RU.%D0%90%D0%9228.%D0%92.03578:

№P18-11700-ДКП ծածկագրով պայմանագրում հղում է կատարված հետևյալ համապատասխանության սերտիֆիկատին՝ TCRUC-RU.ИМ43.В.01646 / http://www.list-org.com/sert/%D0%A2%D0%A1%20RU%20%D0%A1-RU.%D0%98%D0%9C43.%D0%92.01646/, որը տրված է «Տեխիմպորտ» ՍՊԸ-ի կողմից և որը նույնպես չի գործում /https://pub.fsa.gov.ru/ral/view/15427/accredited-entity/, բացի այդ, «Տեխիմպորտ» ՍՊԸ-ն իրավունք ուներ տրամադրելու սերտիֆիկատներ միայն հետևյալ տեսակի արտադրանքների համար՝

- մարդատար ավտոմեքենաներ / կատեգորիա M1/.
- բեռնատար ավտոմեքենաներ առավելագույնը 3,5 տոննա քաշով / կատեգորիա 1/
- մոտոտրանսպորտային միջոցներ / կատեգորիա L/
- ավտոբուսներ, տրոլեյբուսներ / կատեգորիա M2, M3/
- բեռնատար ավտոմեքենաներ 3,5 -12 տոննա քաշով / կատեգորիա 2, 3/
- կցանքներ և կիսակցանքներ / կատեգորիա O/

http://www.techimport.su/%D1%81%D0%B1%D0%BA%D1%82%D1%81.

Ակներև է, որ նշված ցանկում բացակայում են արդյունաբերական տրակտորները և բուլդոզերները:

Դեռևս 16.04.2019թ. «Վանգաս» ՍՊԸ-ն հայտնել է գնահատող հանձնաժողովին վերոհիշյալ թերությունների և բացթողումների մասին, սակայն հանձնաժողովը ընթացք չի տվել նշված գրությանը և նրանում բարձրացված խնդիրները մնացել են չլուծված: Ավելին, անգամ 18.04.2019թ. www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԱՎԱՆԳԱՐՏ» ԱՄ ՍՊԸ-ի (կոնսորցիում) հետ պայմանագիր կնքելու մասին հայտարարություն:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը, անտեսելով «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԱՎԱՆԳԱՐՏ» ԱՄ ՍՊԸ-ի (կոնսորցիում) կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում՝ մասնագիտական փորձառության մասով, առկա բացթողումները և անհամապատասխանությունները

Մրցույթի հրավերի պահանջներին, խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 47-րդ կետի, Հրավերի 2.5 կետի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բուլդոզերների ձեռքբերման նպատակով հայտարարված « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագության 1.2 կետով «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԱՎԱՆԳԱՐՏ» ԱՄ ՍՊԸ-ի (կոնսորցիում) ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը Մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և վերջիններիս հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Ի լրումն բողոքի «Վանգաս» ՍՊԸ-ն 22.05.2019թ. գրությամբ հայտնել է, որ հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը, իսկ ներկայացված փաստաթղթերը հավաստում են, որ պայմանագիրը սահմանված ժամկետում չի կատարվել, հետևաբար գնահատող հանձնաժողովի կողմից 18.06.2018թ կնքված N Р18-11700-ДКП պայմանագիրը չի կարող գնահատվել որպես պատշաճ կատարված և համապատասխանաբար «Մասնագիտական փորձաքննություն» որակավորումն հավաստող փաստաթուղթ:

Ընկերությունը հայտնել է, որ փաստաբան Հունան Տեր-Վարդանյանի կողմից 25.04.2019թ. ՀՀ ֆինանսների նախարարությունից պահանջվել է պարզաբանում առ այն, որ եթե պայմանագրի մի կողմը (օրինակ՝ մատակարար) իր պայմանագրային պարտավորությունները (օրինակ՝ մատակարարումը կամ ծառայության մատուցումը) կատարվել է պայմանագրով սահմանված ժամկետի խախտումներով, ուշացումներով, ապա նման պայմանագիրն արդյոք կարող է Կարգի 61-րդ կետի իմաստով համարվել պատշաճ ձևով իրականացված, թե ոչ:

Ի պատասխան կատարված փաստաբանական հարցման՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է հետևյալ գրությունը. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, նույն օրենքից և իրավական այլ ակտերից: Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման վերաբերյալ պահանջները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով»:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության տրված պարզաբանումը՝ Ընկերությունը հայտնել է, որ գրությամբ վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Այսպիսով՝ ՀՀ քաղ. օրենսգրքի 408-րդ հոդվածի ուժով «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» բաժնետիրական ընկերության միջև 18.06.2018թ կնքված N P18-11700-ДКП ծածկագրով առուվաճառքի պայմանագիրը համարվում է պարտավորությունների խախտմամբ կատարված, անպատշաճ՝ կետանցով կատարված պայմանագիր, ուստի այն չի կարող համարվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետին համապատասխան ներկայացված պատշաճ իրականացված համանման պայմանագիր:

«Վանգաս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.04.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից «Դելտա-Գրուպ» և «Ավանգարդ» ԱՄ ՍՊ ընկերությունները ներգրավվել են ԳԲՔԱ-ՆԳ-2019/15 բողոքով որպես երրորդ կողմ:

«Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Դելտա-Գրուպ» և «Ավանգարդ» ԱՄ ՍՊ ընկերությունների կոնսորցիումն (հետայսու նաև՝ Կոնսորցիում) ամբողջությամբ առարկում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի ապրիլի 25-ին ներկայացված բողոքի դեմ, քանի որ գտնում է, որ դրա հիմքում չկա որևէ փաստացի և իրավական հիմք, բողոքում ներկայացված տվյալները խեղաթյուրված են ներկայացված ու չեն արտացոլում իրականությունը և ստորև ներկայացնում է իր դիրքորոշումն ու հակափաստարկները.

Բողոքաբերի կողմից ներկայացված պնդումը, որ կոնսորցիումի կողմից ներկայացված «ԱՎԱՆԳԱՐԴ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԵԲ-Լիզինգ» բաժնետիրական ընկերության միջև 2018 թվականի հունիսի 18-ին կնքված N Р18-11700-ДКП առուվաճառքի պայմանագրի /հետայսու նաև՝ N Р18-11700-ДКП առուվաճառքի պայմանագիր/ շրջանակներում «ԱՎԱՆԳԱՐԴ» ԱՄ ՍՊԸ-ն պատշաճ չի կատարել իր, իրականությանը չի համապատասխանում և չունի որևէ իրավական հիմնավորում հետևյալ պատճառաբանությամբ.

1) Բողոքաբերը իր բողոքում է մեջբերում է N Р18-11700-ДКП առուվաճառքի պայմանագրի 3.1-րդ կետը, որով սահմանված է, որ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվեր Վաճառողի կողմից նույն պայմանագրի 2.4.1-րդ կետում նշված պայմաններով կանխավճարը ստանալուց հետը 20 օրացուցային օրվա ընթացքում: Տվյալ

մեջբերումը համապատասխանում է իրականությանը, սակայն Բողոքաբերը մեջբերում է նաև N Р18-11700-ДКП առուվաճառքի պայմանագրի 2.4.1-րդ կետը նշելով, որ այդ կետով սահմանված է եղել, որ կանխավճարի փոխանցումը պետք է կատարվեր պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 21 բանկային օրվա ընթացքում, ինչը իրականության մոլորեցնում է ընթերցողին, քանի որ Բողոքաբերը չի ներկայացրել տվյալ կետը ամբողջությամբ: Այնինչ 2.4.1-րդ կետով սահմանված է եղել, որ կանխավճարը ենթակա է փոխանցման պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 21 բանկային օրվա ընթացքում, Գնորդի կողմից վճարման հաշիվ ստացած լինելու դեպքում: Այսինքն 21 բանկային օրն ըստ էության ենթակա հաշվարկման Վաճառողի կողմից վճարման հաշիվ ներկայացրած լինելու և Գնորդի կողմից այն ստացված լինելու պահից: Վերը նշված փաստերի համադրությունը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ պարզապես կանխավճարն ուշ է ստացվել և ապրանքը մատակարարվել է այն ստանալուց հետո 20 օրացույցային օրվա ընթացքում.

2) N Р18-11700-ДКП առուվաճառքի պայմանագրի 6. 1-րդ կետով սահմանված է Գնորդի իրավունքը՝ պահանջել Վաճառողից տույժ պայմանագրի գնից 0. 1%-ի չափով մատակարարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար: Սակայն ինչպես երևում է N Р18-11700-ДКП առուվաճառքի պայմանագրին կից ներկայացված հաշիվ-ապրանքագրից, Վաճառողը ստացել է պայմանագրի գնին համապատասխան վճարում, ինչև ևս փաստում է, որ Վաճառողի կողմից մատակարարման ուշացում թույլ չի տրվել և վերջինիս վրա որևէ տույժ չի հաշվարկվել.

Բողոքաբերի՝ վերը նշված պնդումը վերջինիս կողմից որևէ փաստաթղթով չի ապացուցվում և հիմնված է լոկ N Р18-11700-ДКП առուվաճառքի պայմանագրի կետերի թերի ներկայացման վրա.

2. Բողոքաբերի կողմից ներկայացված պնդումն առ այն, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված պայմանագրերը իրականությանը չեն համապատասխանում, ևս մտացածին է և որևէ փաստով հիմնավորված չէ, ավելին՝ տվյալ պնդման շրջանակներում ներկայացված է ակնհայտ մոլորեցնող տեղեկատվություն, մասնավորապես.

1) Բողոքաբերը նշում է, որ «ԱՎԱՆԳԱՐԴ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԵԲ-Լիզինգ» բաժնետիրական ընկերության միջև կնքված N Р18-21638-ДКП և Р-18-21639-ДКП պայմանագրերում որպես ապրանքի արտադրության հասցե նշված է ք. Չելյաբինսկ,

Կալինով դվոռ, տուն 7 հասցեն, և որտեղ տեղակայված է մետաղաջարդոնի ընդունման կետ՝ վկայակոչելով, ինչ որ չստուգված վեբ ռեսուրս: Այնինչ Բողոքաբերը չի բացահայտում, որ դա ոչ թե արտադրամասի հասցեն է, այլ տվյալ արտադրանքը արտադրած կազմակերպության «ՉՉՍՄ» ԲԲԸ-ի իրավաբանական հասցեն է, ինչը հավաստվում է ՌԴ-ում իրավաբանական անձանց պետական գրանցման ռեեստրի տվյալներով /կցվում է/.

2) Բողոքաբերը նշել է, որ «ԱՎԱՆԳԱՐԴ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԵԲ-Լիզինգ» բաժնետիրական ընկերության միջև կնքված N Р18-21638-ДКП և Р-18-21639-ДКП պայմանագրերում հղում է արված N C-RU.AB28.B.03578 համապատասխանության սերտեֆիկատին, այնինչ այդ պահին այն չի գործել, քանի որ դրա գործողությունը դադարեցված է եղել 2016 թվականի սեպտեմբերի 21-ին: Եվ կրկին Բողոքաբերը ամբողջովին չի ներկայացնում փաստերը: Եվ այսպես՝ վերը նշված սերտեֆիկատը նշված «ԱՎԱՆԳԱՐԴ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԵԲ-Լիզինգ» բաժնետիրական ընկերության միջև կնքված N Р18-21638-ДКП և Р-18-21639-ДКП պայմանագրերով վաճառվող բուլդոզերների նկարագրության մեջ՝ մասնարում, որտեղ ի թիվս այլ տեղեկությունների նշված է նաև, որ այդ բուլդոզերները արտադրվել են 2016 թվականի փետրվարի 1-ին, իսկ մյուսը 2-ին և դրանց արտադրման պահին վերևում հիշատակված սերտեֆիկատները գործել են ու հետևաբար արտադրանքը տվյալ պահին համապատասխանել է այդ պահանջներին.

3) Բողոքաբերը նշել է, որ N Р18-11700-ДКП առուվաճառքի պայմանագրում նշված N TCRUC-RU.ИМ43.B.01646 համապատասխանության սերտեֆիկատը տրամադրած «Տեխիմպորտ» ՍՊԸ-ն չի գործում, այնուհետև նշում է, որ տվյալ կազմակերպությունը նման սերտեֆիկատ տալու իրավասությունն չուներ և հղում է կատարում տվյալ կազմակերպության կայքին, որից ակնհայտ է որ այդ կազմակերպությունը գործում է: Կամ դիցուք այս պահին այդ կազմակերպությունը չի գործում, դա որևէ բան չի նշանակում, չէ որ N Р18-11700-ДКП առուվաճառքի պայմանագիրը կնքվել է գրեթե մեկ տարի առաջ: Ակնհայտ է, որ Բողոքաբերի ներկայացված տեղեկությունները իրարամերժ են: Իրականությանը չի համապատասխանում նաև այն փաստը, որ «Տեխիմպորտ» ՍՊԸ-ն չէր կարող տրամադրել նման սերտեֆիկատ, քանի որ տվյալ ընկերության կայքում հստակ նշված են այն բնագավառները, որոնց մասով նա կարող է սերտեֆիկացնել և այդ

բնագավառներում ընդգրկված են նաև վերը նշված պայմանագրի առարկա հանդիսացող ապրանքները /կայքից քաղվացքը կցվում է/: Եվ վերջապես անհրաժեշտ ենք համարում նշել, որ Բողոքաբերի կողմից վերևում ներկայացված տեղեկությունները, որևէ կերպ չեն առընչվում պայմանագրերի պատշաճ կատարմանը, այլ հանդիսանում են դրանց կողմերի փոխհարաբերությունների մաս միայն:

Կազմակերպությունը հայտնել է, որ Ընկերության կողմից վկայակոչված պնդումներում որևէ իրավական հիմնավորում և ապացույց չկա վերջինիս պահանջների հետ, ուստի բողոքն ենթակա է մերժման:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 07.05.2019թ. թիվ ՊՆ/02/498-2019 գրությամբ Գնումների հետ կապված բողոքեր քննող անձին տրամադրել է «Վանգաս» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.04.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դելտա-Գրուպ» և «Ավանգարդ» ԱՄ ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի 4.1 կետի համաձայն՝ Կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ Կոնսորցիումի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող և Կոնսորցիումը ճանաչվել է ընտրված մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից 25.04.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.05.2019թ. թիվ ՊՆ/02/498-2019 գրությանը կից փաստաթղթերը, «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) ...

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5 ենթակետի համաձայն՝ մրցույթի իմաստով ***նմանատիպ են համարվում շինարարական և/կամ շինարարության մեջ օգտագործվող տեխնիկայի և/կամ պահեստամասերի և/կամ ավտոմեքենաների մատակարարման պայմանագրերը:***

Ընթացակարգի մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դելտա-Գրուպ» և «Ավանգարդ» ԱՄ ՍՊ ընկերությունների կոնսորցիումը, որը գնահատող հանձնաժողովի 26.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի 4.1 կետի համաձայն՝ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Կոնսորցիումի կողմից «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորելու համար ներկայացվել է «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» կազմակերպության միջև 18.06.2018թ. կնքված արդյունաբերական տրակտորի առուվաճառքի թիվ Р18-11700-ДКП, «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» կազմակերպության միջև 12.12.2018թ. կնքված բուլդոզերի առուվաճառքի թիվ Р18-21639-ДКП, «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» կազմակերպության միջև 12.12.2018թ. կնքված բուլդոզերի առուվաճառքի թիվ Р18-21638-ДКП պայմանագրերը՝ կից հաշիվ-ապրանքագրերի պատճեններով և հանձնման-ընդունման արձանագրություններով:

Անդրադառնալով «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» կազմակերպության միջև 18.06.2018թ. կնքված արդյունաբերական տրակտորի առուվաճառքի թիվ Р18-11700-ДКП պայմանագրի (հետայսու նաև՝ Պայմանագիր 1) վերաբերյալ «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից բողոքում նշված պնդումներին, գտնում եմ, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

Ընկերությունը բողոքով պնդել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագիր 1-ով սահմանված ապրանքի հանձնման ժամկետը, քանի որ այն պետք է իրականացվեր կանխավճարը ստանալուց հետո 20 բանկային օրվա ընթացքում, իսկ 2.4.1 կետի համաձայն՝ կանխավճարի փոխանցումը պետք է կատարվեր պայմանագիրն ուժի

մեջ մտնելուց հետո 21 բանկային օրվա ընթացքում, մինդեռ ապրանքը հանձնվել է 21.10.2018թ.:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ընկերության կողմից վկայակոչված Պայմանագիր 1-ի 2.4.1 կետը սահմանում է, որ կանխավճարն ենթակա է փոխանցման պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 21 բանկային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից վճարման հաշիվ ստացած լինելու դեպքում: Այսինքն 21 բանկային օրն ըստ էության ենթակա է հաշվարկման Վաճառողի կողմից վճարման հաշիվ ներկայացրած լինելու և Գնորդի կողմից այն ստացված լինելու պահից:

Իսկ նույն պայմանագրի 3.1 կետը սահմանում է, որ վաճառողն ապրանքի մատակարարումն իրականացնում է կանխավճարը ստանալուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում:

Կողմերի միջև 30.10.2018թ. կնքվել է Պայմանագիր 1-ի փոփոխությունը, որով սահմանվել են ապրանքի հատկանիշները, իսկ 31.10.2018թ. կողմերի միջև կնքվել է հանձնման-ընդունման արձանագրություն, որի համաձայն «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով սահմանված կարգով գնորդին հանձնվել, իսկ վերջինիս կողմից ընդունվել է Պայմանագիր 1-ով նախատեսված ապրանքը:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը գնահատող հանձնաժողովին պետք է ներկայացնի կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) ***պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:***

Ուսումնասիրելով «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» կազմակերպության միջև 18.06.2018թ. կնքված արդյունաբերական տրակտորի առուվաճառքի թիվ Р18-11700-ДКП պայմանագիրը՝ կից փաստաթղթերով, գտնում եմ, որ այն համարվում է պատշաճ կատարված, քանի որ «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ն իր պայմանագրային պարտավորությունների շրջանակներում սահմանված կարգով գնորդին հանձնել է նախատեսված ապրանքը, իսկ վերջինս ընդունել է այն, որի վերաբերյալ կազմվել է

համապատասխան արձանագրություն: Ինչ վերաբերում է պայմանագրով նախատեսված կանխավճար ներկայացնելու և կանխավճարը ստանալու պայմանով ապրանքը մատակարարելու համար սահմանված ժամկետներին, որի վրա Բողոքաբերը հրավիրում է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը, գտնում եմ, որ նշված ժամկետները ըստ էության էական նշանակություն չունեն Պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար, քանի որ առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը) պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար (գինը): Դրա հետ մեկտեղ նաև Պայմանագիրը նախատեսում է նաև գնորդի իրավունքը՝ կիրառելու պատասխանատվության միջոցներ վաճառողի կողմից պայմանագրային պարտավորությունները խախտելու համար, որոնք տվյալ դեպքում բացակայում են, հետևաբար վաճառողի կողմից պայմանագրային պարտավորությունը կատարվել է պատշաճ, որը ընդունվել է գնորդի կողմից:

Անդրադառնալով «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» կազմակերպության միջև 18.06.2018թ. կնքված արդյունաբերական տրակտորի առուվաճառքի թիվ Р18-11700-ДКП, «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» կազմակերպության միջև 12.12.2018թ. կնքված բուլդոզերի առուվաճառքի թիվ Р18-21639-ДКП, «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի և «ՎԷԲ-լիզինգ» կազմակերպության միջև 12.12.2018թ. կնքված բուլդոզերի առուվաճառքի թիվ Р18-21638-ДКП պայմանագրերում ներառված համապատասխանության սերտիֆիկատների վերաբերյալ «Վանգաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկներին, գտնում եմ, որ դրանք անհիմն են քանի որ.

Կարգի 65-րդ կետը սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով

սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/1» ծածկագրով բաց մրցույթի գնման առարկան հանդիսանում է բուլդոզերների ձեռքբերումը, իսկ հրավերով սահմանվել է, որ մրցույթի իմաստով նմանատիպ են համարվում շինարարական և/կամ շինարարության մեջ օգտագործվող տեխնիկայի և/կամ պահեստամասերի և/կամ ավտոմեքենաների մատակարարման պայմանագրերը: Տվյալ դեպքում խոսքը չի գնում շինարարական ծրագրերի գնման մասին, որի դեպքում համանման (նմանատիպ) պայմանագրերի տնտեսական գործունեության խմբի պահանջը սահմանելիս հաշվի է առնվում քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Այլ Ընթացակարգի հրավերով որպես համանման (նմանատիպ) պահանջվել է ներկայացնել շինարարական և/կամ շինարարության մեջ օգտագործվող տեխնիկայի և/կամ պահեստամասերի և/կամ ավտոմեքենաների մատակարարման պայմանագրերը, որոնք գնահատելու համար Կարգը և հրավերը սահմանում են մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերը:

Տվյալ դեպքում Ընկերության կողմից վկայակոչված համապատասխանության սերտիֆիկատները չեն կարող հիմք հանդիսանալ պայմանագրերի՝ Կարգի 61-րդ կետի համաձայն նմանատիպությունը գնահատելու համար, քանի որ պայմանագրերի գնահատման համար էական նշանակություն ունի պայմանագրով սահմանված կարգով ապրանքի մատակարարված լինելը և որևէ պահանջ նախատեսված չէ համապատասխանության սերտիֆիկատի առկայության վերաբերյալ: Այլ հարց է, որ Մրցույթի հրավերը սահմանում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի որակի սերտեֆիկատի պարտադիր լինելը: Նույն հիմնավորումը վերաբերում է նաև բողոքաբերի կողմից վիճարկվող ապրանքի արտադրման, առաքման և հանձնման-ընդունման ակտի ստորագրման հասցեին, քանի որ տվյալ դեպքում կարևորվում է պայմանագրով նախատեսված ապրանքի սահմանված կարգով հանձնման և ընդունման փաստը, այլ ոչ թե դրա տեղի ունենալու վայրը:

Այսպիսով՝ Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ Կոնսորցիումի կողմից ներկայացվել են վերոհիշյալ պայմանագրերը, դրանց հաշիվ-ապրանքնագրերը, պայմանագրի կողմերի հաստատած հանձնման-ընդունման արձանագությունները, որոնց համաձայն՝ «Ավանգարդ» ԱՄ ՍՊԸ-ի կողմից պայմանագրերով սահմանված կարգով մատակարարվել, իսկ «ՎԷԲ-լիզինգ» կազմակերպության կողմից սահմանված կարգով ընդունվել են նշված պայմանագրերով նախատեսված ապրանքները:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Վանգաս» ՍՊԸ-ի 25.04.2019թ. բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վանգաս» ՍՊԸ-ի կողմից 25.04.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**